

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ծանօթ է Յորդանանի և արտասահմանի մերազն ժողովուրդին թէ, Կերշ, Տ. Սուրէն Արքեպս. Գէմհանեանը դատ բացած էր Ամմանի Գերագոյն Ատեա. նին առջև, երուսաղէմի և Ս. Տեղեաց Կառավարիչին դէմ, որ առաջին ամբաստանեայն էր, և Սուրբ Աթոռոյ Սրբազան Պատրիարքին դէմ, որ երկրորդ ամբաստանեայն կը նկատուէր:

Սուրէն Արքեպիսկոպոս Բարձրագոյն Ատեանին առջև կ'ամբաստանէր երուսաղէմի Կառավարիչը երկու մեղադրանքներով: ա) որ ան, 26 Մարտ 1960ին արտօնած էր Եղիշէ Սրբազանի մուտքը Վանքէն ներս, պարտադրելով զինքը Միաբանութեան, հակառակ այն իրողութեան որ այս վերջինը արտաքսուած էր Միաբանութենէն, բ) 2 Յունիս 1960ին, հաստատած ըլլալուն համար Եղիշէ Սրբազանը, Հայոց Պատրիարքարանի Տեղապահի իր պաշտօնին մէջ:

Բարձրագոյն Ատեանը լսեց երկու կողմերու պաշտպանողականները, Սուրէն Սրբազանի վերոյիշեալ զոյգ ամբաստանութիւններու շուրջ, ուր յայտնի եղաւ թէ, ա) 26 Մարտ 1960ին, Եղիշէ Սրբազան Վանք կուգար Յորդանան գտնուող Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամներու մեծամասնութեան՝ 26 էն 14ի զրաւոր հրաւերով և թէ երուսաղէմի և Ս. Տեղեաց Կառավարիչը բացարձակապէս անտեղեակ էր եղածէն և լուր ունենալէն յետոյ ալ բնաւ փորձ չըրաւ բռնի ուժով պահելու Եղիշէ Սրբազանը Վանքէն ներս: բ) 2 Յունիս 1960ին երուսաղէմի և Ս. Տեղեաց Կառավարիչը Վանք կուգար միայն յայտարարելու, Պատրիարքարանի դահլիճին մէջ համախմբուած Ս. Յակոբեանց Միաբանութեան, թէ Յորդանան գտնուող Ս. Աթոռոյ Միաբանութեան 25 անդամներէն 15 Միաբաններ իրենց ստորագրութիւններով դիմում ըրած են իրեն, ընդունելով Եղիշէ Սրբազանը իրեն օրինաւոր Տեղապահ Ս. Աթոռոյ և իրենց, և թէ ինք որեւէ առարկութիւն չենելու ի վիճակի չէր նկատեր ինքզինքը այս դիմումին առիթով: Աւելին, Կառավարիչը այս առիթով երբ կը հարցնէր բովանդակ Միաբանութեան թէ որեւէ առարկութիւն ունէ՞ր, այս դիմումագրին վերաբերեալ, ոչ մէկ բողոքի ձայն կը լսուէր, ընդհակառակն, հոն հաւաքուող Միաբանութեան բոլոր անդամները, Սուրէն Արքեպիսկոպոսի զխաւարութեամբ, կը շնորհաւորէին Միաբանութեան փափաքով և դիմումով վերահաստատուած Տեղապահը:

Հետևաբար, 3 Օգոստոս 1960ին, Բարձրագոյն Ատեանը, որ առժամաբար միայն ընդունած էր դատը, լսելու համար եղած ամբաստանութիւնները, եկաւ այն եզրակացութեան թէ զրաւոր և՛ բերանացի ոչ մէկ փաստ կար հաստատող Սուրէն Սրբազանի վերոյիշեալ զոյգ ամբաստանութիւնները երուսաղէմի և Ս. Տեղեաց Կառավարիչին և Ս. Աթոռոյ Սրբազան Պատրիարքին դէմ, այս իսկ պատճառաւ Բարձրագոյն Ատեանը չէր ստանձնէր դատը, անհիմն յայտարարելով եղած մեղադրանքները: